ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՐԹԱԿ

h.2261093
24-09-2026թ.
Նախընտրած ծանուցման ձևը՝
Էլ.փոստի միջոցով

Հասցեատեր՝ *Լոռու մարզպետարան*

Դիմող՝ *ՀԱՅԿԱԿԱՆ ՌԵԳԲԻԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ ՀԿ*
Հասցե՝ *ԵՐԵՎԱՆ, 0069, ՔԱՆԱՔԵՌ-ՉԵՅԹՈՒՆ, ԴՐՈՅԻ Փ., 15, 45*
zarbabyan91@gmail.com : 37494093188

ՀԱՐՑՈՒՄ

ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ խնդրում եմ տրամադրել տեղեկություններ.

Թեմա՝ Վանաձոր քաղաքում ռեգբիի միջազգային փառատոնի անցկացման հնարավորության վերաբերյալ

Հարգելի՛ գործընկերներ,

«Հայկական ռեգբիի միություն» հասարակական կազմակերպությունը տարիներ շարունակ իրականացնում է Հայաստանում ռեգբի մարզաձևի զարգացման և տարածմանն ուղղված ծրագրեր՝ նպատակ ունենալով ձևավորել նոր մարզական համայնքներ ինչպես Երևանում, այնպես էլ ՀՀ մարզերում։

2026 թվականի հոկտեմբերին Միությունը նախատեսում է Վանաձոր քաղաքում կազմակերպել ռեգբիի փառատոն՝ Հայաստանի ակումբների հետ միասին ներգրավելով նաև Վրաստանից հրավիրված ռեգբիի ակումբներ։ Քննարկվում է նաև Ռուսաստանի Դաշնությունից թիմերի մասնակցության հնարավորությունը։

Միջոցառման անցկացման համար անհրաժեշտ է համապատասխան մարզադաշտ և ենթակառուցվածքներ։ Հաշվի առնելով, որ Հայաստանում ռեգբիի զարգացման ծրագրերը ներկայում հիմնականում իրականացվում են Միության սեփական միջոցներով, իսկ Երևանում համապատասխան մարզադաշտերի վարձակալության արժեքը բավականին բարձր է, ցանկանում ենք դիտարկել միջոցառումը Վանաձորում՝ «Լոռի» մարզադաշտում կամ մարզպետարանի կողմից առաջարկվող համապատասխան այլ մարզական ենթակառուցվածքում անցկացնելու հնարավորությունը։

Մեր գնահատմամբ՝ նման միջոցառումը կարող է նպաստել ոչ միայն մարզում ռեգբիի և առհասարակ սպորտի զարգացմանը, այլև Վանաձորի ճանաչելիության և մարզական ակտիվության բարձրացմանը։ Միջոցառման շրջանակում Վանաձոր կժամանեն արտասահմանյան մարզիկներ, մարզիչներ և թիմերի ներկայացուցիչներ,

Digitally signed by ՍԱՀԱԿ ՋԱՐԲԱԲՅԱՆ
2008910741
2026-09-24 14:30:59 GMT+04:00

որոնք մի քանի օր կգտնվեն քաղաքում՝ օգտվելով տեղական հյուրանոցային, սննդի և այլ ծառայություններից։

Միաժամանակ, միջազգային ակումբների մասնակցությամբ ռեգբիի փառատոնը հնարավորություն կտա մարզաձևը ներկայացնել Լոռու մարզի երեխաներին և երիտասարդներին։ Մեր հետագա նպատակներից է նաև մարզում ռեգբիի մշտական մարզումների և մանկապատանեկան խմբերի ձևավորումը, ինչի համար այս միջոցառումը կարող է դառնալ կարևոր մեկնարկային քայլ։

Հաշվի առնելով վերոգրյալը՝ խնդրում ենք տեղեկացնել, թե Լոռու մարզպետարանի աջակցությամբ ինչ պայմաններով և հնարավորություններով կարող է կազմակերպվել նշված միջոցառումը Վանաձոր քաղաքում, մասնավորապես՝ մարզադաշտի կամ համապատասխան մարզական ենթակառուցվածքի տրամադրման և կազմակերպչական հնարավոր աջակցության մասով։

Պատրաստ ենք հանդիպել Լոռու մարզպետարանի համապատասխան ներկայացուցիչների հետ և քննարկել ինչպես նախատեսվող միջոցառման կազմակերպչական հարցերը, այնպես էլ Լոռու մարզում ռեգբիի հետագա զարգացման և երկարաժամկետ համագործակցության հնարավոր ուղղությունները։

Կանխավ շնորհակալություն ենք հայտնում համագործակցության և Հայաստանում մարզական կյանքի զարգացմանն ուղղված նախաձեռնություններին աջակցելու համար։

Հարգանքով՝
Սահակ Զարբաբյան
Նախագահ
«Հայկական ռեգբիի միություն» ՀԿ

Պատրաստ եմ վճարել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված սահմանաչափը գերազանցող տեղեկության տրամադրման համար։

Դիմող՝

ՍԱՀԱԿ ԶԱՐԲԱԲՅԱՆ